ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ

N1 ՎԱՐԺԱՐԱՆԻ



ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2022-23 ՈՒՍՏԱՐԻ

Հ.Ջանջուղազյան

ՎԱՐԺԱՐԱՆԻ ԿՈՉՈՒՄԸ

/ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ /

2022– 23 ուսումնական տարին վարժարանի աշխատանքային գործունեության քսանյոթերորդ տարին է: Իր ստեղծման օրից վարժարանը տվել է 849 շրջանավարտ, որից 10-ը մեդալակիր:

N1 վարժարանը հիմնադրվել է 1995 թվականին, գործել է հոսքերով, ունի իր պատմությունը:

Հիմնադրման օրվանից վարժարանը տվել է 849 շրջանավարտ, որի մեծամասնությունը ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություններ և տվել 10 մեդալակիր:

Վերջին 5 տարում վարժարանն ավարտել է 178 սան, բուհ են ընդունվել 119-ը, որից անվճար՝ 37 սան:

Վարժարանի սաները ամեն տարի հաջողություն են ունեցել տարածքային և մարզային առարկայական օլիմպիադաներում: Մասնակցել են նաև առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին և արժանացել դիպլոմների և շնորհակալագրերի: Վարժարանի սաներն են մասնակցել մարզկենտրոնում կազմակերպված տարբեր մրցույթներին, գրավել I, II պատվավոր տեղեր: Մասնավորապես՝ հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա շրջանակում 2022թ. ապրիլի 18-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Վանաձորի Լոռի - Փամբակի երկրագիտական թանգարանի կողմից անցկացվել է «Լոռվա պատմամշակութային ժառանգությունը» խորագրով դպրոցական թեմատիկ առաջին օլիմպիադան, որին մասնակցել է մարզի շուրջ չորս տասնյակ դպրոցի 200 աշակերտ, և վարժարանի սաները գրավել են I պատվավոր տեղը:

Կրթօջախում խստորեն պահպանվում է կարգուկանոն, ուշադրություն դարձվում սաների բարոյահոգեբանական դաստիարակությանը, խոր ու կայուն գիտելիքներ տալուն: Այս ամենը վարժարանի նվիրյալ մանկավարժ-

ների շնորհիվ է, որտեղ աշխատում են երկարամյա մանկավարժական փորձ ունեցող, հմուտ,մանկավարժական նորամուծությունները ուսումնական գործընթացում իրականացնող մանկավարժներ:

Այս է պատճառը, որ քաղաքի բնակչության մեջ մեծ հեղինակություն ունի վարժարանը, և ծնողները գերադասում են իրենց երեխաների կրթությունը վստահել վարժարանի մանկավարժներին, ու ամեն տարի ավելանում է սաների թիվը:

Պարտադիր կրթության կենսագործում

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Կոմպլեկտավորել ավագ դպրոցի հոսքային դասարանները երեխաներին ծանոթացնել վարժարանի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին:Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործընթացը բարեհաջող սկսելու համար:	օգոստոս, սեպտեմբեր	տնօրեն, փոխտնօրեն	
2	Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական այլ պիտույքներով:	սեպտեմբեր	տնօրեն, տն. ուս. աշխ. գծ.տեղ.,դաս տ. աշխ. կազմ.	
3	Կատարել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում:	սեպտեմբեր	տն. ուս. աշխ. գծ.տեղ.	
4	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:	տարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծ.տեղ., դասղեկներ	
5	Աշխատանք տանել 10-12-րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծ.տեղ., դասղեկներ	
6	Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական և վարժարանի խորհուրդներին:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
7	Դժվար առաջադիմող աշակերտներին,ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների, ընդգրկել արտադպրոցական խմբակներում, անվճար պարապմունքներում:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծ.տեղ., դասղեկներ	
8	Ավագ դպրոցում աշակերտների ընդունելություն իրականացնելու համար վարժարանի տնօրենի հրամանով ստեղծել հասարակական հիմունքներով աշխատող մանկավարժների խորհրդատվական խումբ:	Օգոստոս	տնօրեն, տն. ուս. աշխ. գծ.տեղ	

Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Գրադարանում ստեղծել մեթոդական բաժին, այն հարստացնել մեթոդական, մասնագիտական գրականությամբ,ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորարշիչներով:	օգոստոս, սեպտեմբեր	տնօրեն, տն. ուս. աշխ. գծ.տեղ., գրադարանի վարիչ	
2	Տարեսկզբին հրավիրել առարկայական մասնախմբի նախագահների խորհրդակցություն,պլանավորել նրնաց աշխատանքային տարեկան գործունեությունը հանրակրթական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման և առարկայի դասավանդման արդյուավետության բարձրացման ուղղությամբ:Հանձնարարել	օգոստոս	տնօրեն, տն. ուս. աշխ. գծ.տեղ.	
ա)	Առարկայական մասնախմբերում քննարկել, ամբողջական տեսքի բերել ուստարվա առարկայան մասնախմբի աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման:	օգոստոս	տնօրեն	
բ)	Ներկայացնել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով և նախասիրականով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ առաջարկություններ:	օգոստոս	տն. ուս. աշխ. գծ.տեղ.	
գ)	Ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, տալ համապատասխանն հանձնարարություններ:Թեմատիկ պլաններում առար-կայի չափորոշչային պահանջների համապատասխանության և պլանի լիարժեքության մասնին ներկայացնել հաշվետվություն (գրավոր)տնօրինությանը:	սեպտեմբեր	տն. ուս. աշխ. գծ.տեղ.,	
3	Անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն: Լսել մասնախմբի նախագահների հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ, անհրաժեշտության դեպում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ: Քննարկել մեթոդամանակավարժական հրատապ հիմնահարցեր:	ամիսը մեկ անգամ	տնօրեն, տն. ուս. աշխ. գծ.տեղ.,	

4	Դասղեկների աշխատանքները կատարելա-գործելու նպատակով վարժարանում ստեղծել 10-12-րդ դասարանների դասղեկների միավորումներ : Պլանները ներկայացնել հաստատման՝ նշված ժամանակահատվա-ծում:	օգոստոս	տն. ուս. աշխ. գծ.տեղ.	
5	Կատարել դասալսումներ՝ միջին հաշվով շաբաթական 13-16ժամ/տնօրեն 2-3, փոխտնօրեն՝ 7-8, առարկայակն մասնախմբի նախագահ՝ 2-3: Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման տետրոնմ գրելով անհրաժեշտ դիտողություն-հանձնարարու-թյուններ: Դիտողություն-հանձնարարու-թյունները գրանցել ուսուցչի աշխատանքային գործունեությունը բնութագրելուհամար հատ-կացված «Դիտողությունների և առաջարկու-թյունների գրանցման» մատ-յանում:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծ.տեղ., դասղեկներ, մասնախմբի նախագահներ	
6	Ուսադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին:Նրանց համար կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծ.տեղ., մասնախմբի նախագահներ	
7	Ապահովել ուսուցման արդյունքների ստուգ-ման և գնահատման տասը միավորանի սանդ-ղակրին անցնելու վերաբերյալ մեթոդական ցուցումների կիրառումը: Անհրաժեշտության դեպքում ստեղծել թեմատիկ հարցաշարեր / հարցաշարերի բանկ/ և հաճախ/ 12-րդ դասարաններում աշակերտների գիտելիքները ստուգել նաև համակարգիչների միջոցով: Կիսամյակի ընթացքում ավագ դպրոցում առնվազն երկու անգամ բոլոր առարկաներից կազմակերպել թեմատիկ ստուգումներ՝ տնօրինության ներկայացուցրի կամ առարկայականն մասնախմի նախագահի մասնակցությամբ:	ուստարվա ընթացքում	տնօրինություն առ. մասնախմբի նախագահ, ուսուցիչներ	
8	Հարստացնել վարժարանի լաբորատորիաները:Հետևել, որպեսզի դասը հագեցված լինի զանազան ուսումնադիտողական նյութերով, լաբորատոր սարքավորումներով՝ կարևորելով տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը:	ուստարվա ընթացքում	տնօրինություն	
9	Դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ,գիտագործնական կոնֆերանսներ, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծ.տեղ., մասն. նախագահներ, ուսուցիչներ	
10	Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ, սեմինարներ:Այդ	ուստարվա ընթացքում	տնօրեն,	

	նպատակով հրավիրել բարձրորակ մասնագետներ այլ հաստատություններից, բուհերից, ԳԱ-ից, ԿԱԻ-ից, գիտահետազոտական ինստիտուտներից, ԳԹԿ-ից:			
11	Պահանջել, որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ ուստարվա ընթացքում հանդես գա առնվազն մեկ մեթոդական- մանկավարժական, առարկայական բնույթի զկուցումով:Այն քննարկել առարկայական մասնախմբում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, մասն. նախագահ	
12	Ուսումասիրել հմուտ ուսուցիչների առաջավոր փորձը նև տարածել վարժարանում: Այն իրականացնել «Հետազոտական դպրոց, մանկավարժական լաբորատորիա» ներվարժարանական միավորման անդամների և առարկայական միավորումների նախագահների միջոցով:	մշտապես	տնօրեն, տն. ուս. աշխ. գծ.տեղ.	
13	Մանկավարժական խորհրդում ներկայացնել զեկուցումներ/ նշել թեմաների վերնագրերը, ժամկետը և պաատասխանատուի անունը/: Առնվազն 5-6 զեկուցում:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
14	Կազմակերպել կոսուլտացիոն պարապմունքներ աշակերտներին քննություններին նախապատրաստելու համար:	մայիս	տնօրեն, տն. ուս. աշխ. գծ.տեղ.	
15	Ժամանակին կազմել և հաստատել քննական հանձնաժողովները, փակցնել քննական ժամանակացույցը քննությունները սկսվելուց առնվազն 10 օր առաջ:	մայիս	տնօրեն, տն. ուս. աշխ. գծ.տեղ.	
16	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:	ուստարվա ընթացքում	տնօրինություն	
	Ուսուցիչներին ժամանակին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ կրթության և գիտության նախարարության հրմաններին, հրաահանգներին և այլ նորմատիվ փաստաթղթերին:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
18	Յուրաքանչյուր առարկայական մասնախմբից ուսումնասիրել 2-3 ուսուցչի աշխատանքային գործունեությունը, արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ առարկայական մասնախմբում տալով համապատասխան գնահատական: Հասնել այն բանին, որ մանկավարժական ողջ կոլեկտիվը իր գործունեությամբ բավարարի ուսուցիչներին ներկայացվող ընդհանրական պահանջները:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծ.տեղ.	

Ուսումնադաստիարակչականաշխատանքներիկազմակերպումը

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով:	օգոստոս	տնօրեն, տն. ուս. աշխ. գծ.տեղ., առ. մասնախմբեր	
2	Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով ուսուցումը կազմակերպել հնարավորության դեպքում կաբինետային համակարգով, հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան, օգտագործել առկա տեխնիկականն միջոցների ողջ հզորությունը:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
3	Աշխատանք տանել կաբինետրները և դասահանները անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով կահավորելու ուղությամբ:	օգոստոս, սեպտեմբեր	տնօրեն, կաբինետների վարիչ	
4	Ուսուցիչների համար կազմակերպել համակարգչային դասընթացներ,նրանց սովորեցնել համակարգչով աշխատել:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ինֆորմատիկայի ուսուցիչ, համակարգչային կաբինետի վարիչ	
5	Ստեղծել «Մասնագիտական զարգացման դպրոց» աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծ.տեղ.,	
6	Սովորողների կրթության որակը բարձրացնելու նպատակով կատարել նպատակային դասալսումներ, արդյունքները քննարկել, առաջարկություններն ու դիտողությունները գրանցել նաև ուսուցիչների աշխատանքային գործունեությունը բնութագրող «Դիտողությունների և առաջարկությունների»մատյանում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տն. ուս. աշխ. գծ.տեղ.	

7	Կատարել առարկայական ուսումնասիրություններ, արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում, տնօրինության խորհրդակցություններում, մանկավարժական խորհրդում կամ կոլեկտիվի ժողովում: Ուսումնասիրել Ի կիսամյակի բնագիտական առարկաների դրվածքը 10-12-րդ դասարաններում/ բ) ՏՀՏ-ի օգտագործումը դասրն գ) նոր ծրագրերի և չափորարշչային պահանջ-ների իրականացումը դ) ուսումասիրել II կիսամյակում հումանիտար առարկաների դրվածքը:	ուստարվա ընթացքում	տնօրեն տն. ուս. աշխ. գծ.տեղ., մասն. նախագահնե ր	
8	Ուսումնական լաբորատոր գործնական աշխատանքների ծրագրային պահանջների կատարման ընթացքը բնագիտական առարկաներից:	դեկտեմբեր մայիս	տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
9	Կազմակերպել առարկայական շաբաթներ, միամսյակներ Առարկայական միամսյակներին՝ ա) կազմակերպել ցերեկույթներ, բաց դասեր, միջոցառումներ բ) լույս ընծայել պատի թերթեր	ուստարվա ընթացքում	տնօրեն տն. ուս. աշխ. գծ.տեղ., մասն. նախագահ-ներ,ուսուցիչ-ներ	
10	Ավագ դպրոցում անցկացնել գիտագործնական կոնֆերանսներ աշակերտ-ների և ուսուցիչների մասնակցությամբ:	հունվար ապրիլ	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
11	Անցկացնել առարկայական օլիմպիադաներ: Առարկայական օլիմպիադաներին պատրաստվել ուստարվա սկզբից:	դեկտեմբեր	տնօրեն, հանձնաժո-ղով, մասն. նախագահ-ներ	
12	Անցկացնել «Գիտակների մրցույթ»:		տն. ուս. աշխ. գծով տեղակալ, ՄԿԿ	
13	Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական, որորնողական աշխատանքի / վարժ. լրացուցիչ պարապմունքների միջոցով/:	ուստարվա ընթացքում	տնօրեն տն. ուս. աշխ. գծ.տեղ., մասն. նախագահ-ներ,ուսուցիչ-ներ	
14	Հիմք ընդունելով աշակերտների ցանկությունը և ծնողների համաձայնությունը՝ կազմակերպել նախասիրական պարապմունքներ տարբեր առարկաներից՝ կնքելով ծնողների հետ	ուստարվա ընթացքում	տնօրեն տն. ուս. աշխ. գծով տեղակալ	

	համապատասխան պայմանագիր (անվճար):			
15	ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ Օգնել դասղեկներին՝ կազմակերպելու դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման: Դասղեկներից պահանջել՝ աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները.	սեպտեմ-բերի սկիզբ	տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
ա)	- Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ, աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն, դաստիրակության հիմքում դնել միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ	
բ)	Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ	
գ)	Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ, ՄԿԿ	
դ)	Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը:Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ:	սեպտեմբեր	տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ	
ե)	Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ (բաղկացած 3-4 հոգուց), ապահովել ծնողխորհրդի մասնկցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը:	ուստարվա ընթացքում	դասղեկներ	
զ)	Սահմանել բաց դռների օր, ապահովել ծնող-ուսուցիչ կապը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ	

16 ա)	ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ, ՄԿԿ	
բ)	Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել գեղարվեստական օլիմպիադաներ, հաշվետու համերգներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
գ)	Կանաչապատել դասասենյակներն ու միջանցքները: Ստեղծել վահանակներ:	սեպտմբեր	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ, ՄԿԿ	
17	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ			
ա)	Սովորողների ֆիզիկական դաստիարա-կության բարելավման նպատակով մարզադահլիճը հնարավորության պայմաններում հարստացնել մարզական գույքով:		տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
բ)	Ստեղծել մարմնամարզական խմբակներ տարբեր մարզաձևերից:		տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
գ)	Դպրոցական բժշկի միջոցով պարզել աշակերտների վիճակը, ստեղծել ֆիզկուլտուրայի հատուկ խմբեր, հետևել պարապմունքների անցկացմանը:	սեպտեմբեր	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
դ)	Կահավորել բուժկաբինետը, ձեռք բերել անհրաժեշտ դեղամիջոցներ:	սեպտեմբեր	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղ.,դպր. բժիշկ/ բուժքույր	
ե)	Կազմակերպել սպորտլանդիաներ:	նոյեմբեր ապրիլ	ֆիզկ. ուսուցիչ	
զ)	Պարբերաբար կազմակերպել աշակերտների կողմից մարզական նորմատիվների հանձնում:	սեպտեմբեր մայիս	տնօրեն, ֆիզկ. ուսուցիչ, բժիշկ/ բուժքույր	
է)	Անցկացնել միջդասարանական, միջվարժա-րանական մրցումներ: Դրանք կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իրազեկ դարձնել դասղեկների և աշակերտներին:	հոկտեմբեր մայիս	տն. ուս. աշխ. գծով տեղակալ, ֆիզկ. ուսուցիչ, դասղեկներ	

ը)	Պարբերաբար հետևել ուսումնական գործընթացին, հիգիենային, պահպանել դասա-ցուցակների կազմման և տնային աշխատանքների ժամաբաշխման անհրաժեշտ պահանջները:	մշտապես	տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
թ)	Հրավիրել բժիշկ և նրա միջոցով ացկացնել զրույց բարձր դասարանների սովորողների օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի մասին:	ուստարվա ընթացքում	դպր. բժիշկ/ բուժքույր	
18 ա)	ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ Կազմակերպել հանդիպումներ Հայրենական մեծ պատերազմի վետերանների, հայկական բա-նակի հրամանատարների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ: Հայաստանի III հանրապետության 31-ամյակին նվիրված միջոցառումների շարք:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ	
բ)	Այցելություն Հայրենական մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին:	սեպտեմբեր մայիս	դաստ. գծով փոխտնօրեն, զինղեկ, դասղեկներ	
գ)	Անցկացնել «Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում» միջոցա-ռումը: Աշխատանք տանել ոչ ռազմակա-նացված խմբավորումների հետ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, զինղեկ	
19 ա)	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ, ուսուցիչներ	
բ)	Աշակերտների ուժերով կազմակերպել դպրոցում աճեցվող ծաղիկների խնամքը:Հոգ տանել, որպեսզի ծաղիկներով ու կանաչ բույ-սերով կահավորեն կաբինետները,միջանցքներն ու սրահները:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ	
գ)	Աշակերտների ուժերով կազմակերպել դպրոցում աճեցվող ծաղիկների խնամքը: Հոգ տանել, որպեսզի ծաղիկներով ու կանաչ բույ-սերով կահավորեն կաբինետները, միջանցքներն ու սրահները:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ	
20 ա)	ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ Օգնել գրադարանավարին՝ կազմելու և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլանը:	օգոստոս	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
բ)	Դպրոցի հնարավորություններից ելնելով՝ հարստացնել գրադարանային ֆոնդը: Վերա-նորոգել գրադարանային ֆոնդի դասագրքերն ու գրքերը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, գրադարա-նավար	

գ)	Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ:	ուստարվա ընթացքում	գրադարա-նավար	
դ)	Ստեղծել «Պատանի ստեղծագործողի» ակումբ:Նպաստել երեխեների ստեծագործական մտքի զարգացմանը:Ի հայտ բերել տաղադավոր աշակերտներին:	ուստարվա ընթացքում	գրականու-թյան ուսուցիչներ, գրադարա-նավար	
ե)	Ստեղծել թեմատիկ քարտարաններ,ղեկավարել աշակերտների ընթերցանությունը:	ուստարվա ընթացքում	գրադարա-նավար	
զ)	Դասագրքերով ապահովել աշակերտ-ներին,մշակել համապատասխան փաստաթղթեր:	սեպտեմբեր	տնօրեն, գրադարա-նավար	

Ներվարժարանական վերահսկողության համակարգ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1 ա) բ)	Յուրաքանչյուր շաբաթվա վերջում գումարել տնօրինության նիստ, վերլուծել շաբաթական պլանները: Լսել տնօրենության անդամների հաղորդումը շաբաթական պլանների կատա- րողականի մասին: Բացահայտել աշխատանքում տեղ գտած թերությունները: Քննարկել հաջորդ շաբաթվա աշխատանքային ծրագրերը: Քննարկել հաջորդ շաբաթվա աշխատանքային ծրագրերը:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
2	Ուսումնական տարվա սկզբից ունենալ ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյան:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
3	Հետևել,որ դասաժամերին բացթողումները լրացվեն լրացուցիչ պարապմունքների միջոցով:	մշտապես	տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
4	Ուսումնական տարվա սկզբից կատարել աշխատանքների բաժանում՝ որոշակի դարձնելով յուրաքանչյուրի աշխատանքի շրջանակները:	օգոստոսի վերջ	տնօրեն	
5	Ստուգել և հաստատել ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումները:	սեպտեմբերի սկիզբ	տնօրեն , տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
6	Յուրաքանչյուր ամսվա վերջին տնօրինության նիստում քննարկել սովորողների հաճախումների հարցը:	մշտապես	տնօրեն , տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
7	Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը վարժարանում և արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ մանկավարժական խորհրդում:	սեպտեմբեր	տնօրեն , տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
8 ա) բ)	Ավարտական դասարանների սովորողների գիտելիքներին,կարողություններին ու հմտություններին ծանոթանալու նպատակով տարեկան երկու անգամ անցկացնել ստուգողական գրավոր աշխատանք-ներ: Գրավոր աշխատանքների արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստում:	դեկտեմբեր ապրիլ	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ, մասնախմբի ղեկավարներ	

9	Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարման վիճակը բնագիտական առարկաներից:	հոկտեմբեր, ապրիլ	տն. ուս. աշխ. գծով տեղակալ,	
10	Ստուգել տարբեր առարկաներից տարված ուսուցողական և ստուգողական աշխատանքների քանակը և որակը: Արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդի նիստում:	կիսամյակի վերջում	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ, մասնախմբի ղեկավարներ	
11	Ստուգել ուսումնական ծրագրեր իկատարաողականը և արդյունքները քննարկել տնօրնիության ընդլայնված նիս-տում:	դեկտեմբեր, ապրիլի սկիզբ	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ, մասնախմբի ղեկավարներ	
12	Ստուգել դասամատյանների, աշակերտական օրագրերի ու տետրերի վարման վիճակը:	շաբաթը մեկ անգամ	տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ	
13	Ստուգել դժվար առաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքները, քննարկել տնօրինության ընդլայնված նիստերում:	հոկտեմբեր մարտ	տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ	
14	Գիտելիքների ստուգում կազմակերպել12-րդ դասարաններում:	դեկտեմբեր ապրիլ	տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
15	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը:Արդյունքները քննարկել դասղեկների մեթոդմիավորումում, տնօրինության ընդլայնված նիստում:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծով տեղակալ	

Աշխատանք ծնողների հետ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ:	սեպտեմբեր	տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ	
2	Նախապատրաստել ընդհանուր ծնողականժողով և քննարկել վարժարանի առջև ծառացած՝համատեղ լուծման ենթակա հարցերը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ծնողխորհ. նախ., դասղեկներ	
3	Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների և զեկուցումների թեմատիկ պլան:	սեպտեմբեր	տնօրեն, տն. ուս. աշխ. գծ.տեղակալ	
4	Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները:	սեպտեմբեր	տնօրեն, ծնողխորհ	
5	Հաստատության գործունեությամբ շահագրգռված անձանցից ստեղծել հոգաբարձուների խորհուրդ:	սեպտեմբեր	տնօրեն,	
6	Խորհրդի անդամներին ծանոթացնել հոգաբարձուների խորհրդի կանոնադրությանը:	սեպտեմբեր	տնօրեն	
7	Հոգաբարձուների խորհրդի նիստերում քննարկե լվարժարանի ուսումնանյութական բազայի հարստացման սոցիալապես անապահով ու կարիքավոր աշակերտներին օգնություն կազմակերպելու հարցը:	ուստարվա ընթացքում	խորհրդի նախագահ	
8	Նպաստել ծնողական ու հոգաբարձուների խորհուրդների գործունեությունը:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
9	Ապահովել վարժարանի և ծնողների համատեղ գործունեությունը՝սովորողների ուսուցման ու դաստիակության բարելավման գործում:	ուստարվա ընթացքում	տնօրեն,	
10	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտավարժարանական, դաստիարակչական աշխատանքներին:	մշտապես	տն. ուս. աշխ. գծ.տեղակալ	

Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնանյութական բազայի ամրապնդում

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Կազմել տարիֆիկացիա:	սեպտեմբեր	տնօրեն	
2	Կազմել ծախսերի նախահաշիվ,քննարկել դպրոցի խորհրդում և ներկայացնել մարզպետարանի ֆինանսական բաժին:	ուստարվա ընթացքում	հաշվապահ, ծարժարանի խորհուրդ	
3	Ժամանակին դիմել մարզպետարանին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝շենքի վերանորոգման, գույքի ձեռբերման նպատակով համապատասխան ֆինանսավորում ստանալու համար:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
4	Աշխատանք տանե լդպրոցական գույքի սարքավորումների,ուսումնական տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտսգործման և պահպանման ուղղությամբ:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծ.տեղակալ	
5	Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի ու սարքավորումների հաշվառում:	նոյեմբեր	տն. ուս. աշխ. գծ.տեղակալ հաշվապահ	
6	Ապահովել շենքի ջերմային,լույսային և օդային ռեժիմը:Կանոնավո վիճակում պահե լիակահրդեհային միջոցները:	ուստարվա ընթացքում	տն. ուս. աշխ. գծ.տեղակալ	
7	Բարձրակարգ վիճակում պահել դպրոցի շենքի բակը,մարզահրապարակը:Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը:	ուստարվա ընթացքում	տն. ,տն.ուս. աշխ. գծ.տեղ.,	
8	Հետևել դպրոցի ջեռուցման ներքին ցանցի անխափան աշխատանքին:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ	

Կազմակերպչական-մանկավարժական աշխատանք

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Ելնելով շենքային պայմաններից՝ուսումնական պարապմունքները կազմել մեկ հերթով(6դասարան):Կազմակերպել անվճար ֆակուլտատիվ պարապմունքներ և առարկայական խմբակներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
2	Կոմպլեկտավորել հետևյալ դասարանները՝ X հումանիտար, X բնագիտական, XIա հումանիտար, XIբ հումանիտար, XII բնագիտական,XII հումանիտար:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
3	Նշանակել և մանկավարժական խորհրդին ներկայացնել առարկայական մասնախմբերի նախագահներին:	24.08-31.08	տնօրեն,մանկ. խորհուրդ	
4	Նշանակել և հրամանագրել դասղեկներին:	օգոստոս	տնօրեն,	
5	Ստեղծել աշխատանքային բարենպաստ պայմաններ վերը նշված կառույցներում աշխատանքները նորմալ կազմակերպելու համար:	օգոստոս	տնօրեն	
6	Ուսումնական շենքում,բակում,միջանցքներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն:	մշտապես	տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
7	Նշանակել ավագ հերթապահներ,պահանջել հերթապահներից՝ .Հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը շենքում և բակում: .Կազմակերպել տվյալ օրվա ուսումնական ողջ գործընթացը: .Օրվա վերջում աշխատանքային գործընթացի մասին զեկուցել տնօրենին:	մշտապես	տն. ուս. աշխ. գծ.տեղ ակալ	
8	Սահմանել կարգ. 1.Յուրաքանչյուր աշխատող աշխատանքի ներկայանա սկսելուց 15րոպե առաջ ըստ«Աշխատանքի ժամանակացույցի»հիմք ընդունելով«Ներքին կարգապահական կանոնները»:Ուսուցիչների հաճախումների հաշվառման պարտականությունները դնել փոխտնօրենի վրա:	մշտապես	տն. ուս. աշխ. գծ.տեղ ակալ	
9	Սահմանել վաչասպասարկող անձնակազմի աշխատանքային ռեժիմը: .Արտահայտել«Աշխատանքային ժամանակացույցում»	ուստարվա ընթացքում	տնօրեն	
10	Հետևել,որպեսզի դասղեկները պատասխանատվություն կրեն գույքի և անվտանգության կանոնների պահպանման	ուստարվա ընթացքում	տնօրեն	

	ռասար:			
11	Վարժարանական շենքի պահպանման,տնտեսական կարիքները հոգալու,հակահրդեհային միջոցները իրականացնելու պատասխանատվությունը դնել հրմանագրված հանձնաժողովի վրա:	մշտապես	տն., տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
12	Վարժարանական շենքը էլեկտրական գծերն ու սարքավորումները անվտանգ պահելու պատասխանատվությունը դնել հրմանագրված հանձնաժողովի վրա:	մշտապես	տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
13	Վերանորոգել աշակերտական դասագրքերը:	հունիս օգոստոս	դասղեկներ, գրադարանի վարիչ	
14	Ձևավորել էլեկտրոնային դասամատյանները:	օգոստոս	տն. ուս. աշխ. գծով տեղակալ	
15	Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ յուրաքանչյուր շաբաթ:	շաբաթը մեկ անգամ	տնօրեն	
16	Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները՝ըստ վարժարանի աշակերտական կանոնադրության:	սեպտեմբեր	տն. ուս. աշխ. գծով տեղակալ ՄԿԿ	
17	Համալրել ուսուցչական կազմը և կատարել դասաբաշխում:	օգոստոս	տնօրեն	
18	Հաշվառել գրադարանային ֆոնդի օգտագործման պիտանի դասագրքերը:	հունիս	գրադարանի վարիչ	
19	Օգտագործման ենթակա դասագրքերը վարձույթով ծնողին տալու համապատասխան պայմանագիր:	օգոստոս, սեպտեմբեր	գրադարանի վարիչ	
20	Դասղեկների հետ վերջնականապես ճշտել սոցիալապես անապահով,որբ և միակողմանի ծնողազուրկ երեխաների ցուցակը և հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով:	սեպտեմբեր	տն. ուս. աշխ. գծով տեղակալ, դասղեկ, ծնողխորհրդի նախ.	
22	Վարժարանական շենքը նախապատրաստել նոր ուսումնական տարվա համար:	31.08	տնօրեն, տն. ուս. աշխ. գծով տեղակալ	